ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18 հոկտեմբերի, 2018թ. Երևան

Հիմնադրվեց Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան

Հոկտեմբերի 17-ին տեղի ունեցավ Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի հիմնադիր ժողովը, որի ժամանակ քննարկվեց և հաստատվեց կանոնակարգը, ընտրվեց կառավարման խորհորդը և քննարկվեցին կոալիցիայի զարգացման ուղիները:

Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան հիմնադրվեց «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում. որը Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակում է իրականացվում:

Կոալիցիային հիմադնադիր համաժողովի ընթացքում «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ Ժաննա Ալեքսանյանը նշեց, որ կոալիցիայում ընդգրկվող կազմակերպություններից յուրաքանչյուրն իր ոլորտում հայտնի է և բարձր հեղինակություն ունի:

10 քաղաքացիական հասարակության կազմակերպությունից բաղկացած կոալիցիայի հիմնադրումից և կանոնակարգի հաստատումից հետո ընտրվեց կառավարման խորհուրդը, որը բաղկացած է 9 հասարակական կազմակերպության ներկայացուցիչներից: Առաջիկայում նախատեսվում է, որ կոալիցիայի շարքերը կհամալրեն ոլորտում գործող այլ հասարակական կազմակերպություններ ևս:

Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան իրականացնելու է ծրագրեր, որոնք ուղղված կլինեն մարդու իրավունքները պաշտպանությանը, խախտումների կանխարգելմանը:

Ժաննա Ալեքսանյանը նշեց, որ «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում կոալիցիան նպատակ ունի նպաստել մարդու իրավունքների պաշտպանվածությանը երեք ուղղություններով՝ իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքների նվազեցում, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն, փակ հաստատություններում գտնվող անձանց՝ զինծառայողների և ազատազրկվածների իրավունքների պաշտպանություն, խոշտանգումների բացառում:

Թեև ընդամենը 4 ամիս է անցել ծրագրի մեկնարկից, սակայն արդեն իսկ հաջողություններ կան: Օրինակ, ծրագրի երրորդ կոմպոնենտի մասով, Ժաննա Ալեքսանյանը նշեց, որ իրենց կողմից բարձրաձայնվել է այն մասին, որ անձը դատապարտվել է ինքնախոստովական ցուցմունքի պատճառով, որը բռնությամբ է կորզված եղել. և այս դեպքի առթիվ օրերս քրեական գործ է հարուցվել:

Կոալիցիայի անդամները ծանոթացան արդեն իսկ կատարված աշխատանքներին և քննարկեցին հետագա հանդիպումների և անելիքների մասին հարցեր:

Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի հիմնադիր անդամներն են. «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների», «Իրավունքի ուժ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Ազատ լրագրողների ասոցիացիա», «Ազատ քաղաքացի», «Լրագրողներ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

հանուն ապագայի», «Քաղաքացի-հարկատու բիզնես», «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն», «Մարդու իրավունքների միջազգային հանրություն», «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունները:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող

Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝ info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: